# «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ

<u>**ՆԱԽԱԳԻԾ**</u>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Միաժամանակ մեկից ավելի երեխայի ծնվելու դեպքում նոր ծնված յուրաքանչյուր երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է նոր ծնված յուրաքանչյուր երեխայի հնարավոր բոլոր կարգաթվերի համար սահմանված չափերի հանրագումարի չափով:»:

**Հոդված 2.** Օրենքի 26-րդ հոդվածում.

1. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ընտանեկան դրամագլուխը, մինչև երեխայի (որի անվամբ բացված է պետական աջակցության հաշիվը, այսուհետ՝ հաշվետեր) 18 տարին լրանալը, տնօրինում է.

- ծնողը, ում նշանակվել է երեխայի ծննդյան միանվագ նպաստը,
- մյուս ծնողը, եթե դադարել է ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող ծնողի՝ ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունքը:»,

2. 4-րդ մասում.

- նախաբանում «Սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ օրինական ներկայացուցչի (ծնողի, խնամակալի, որդեգրողի)» բառերը փոխարինել «Ծնողի» բառով.
- 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) դադարել է ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի խնամակալությունը հաշվետիրոջ նկատմամբ (ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձը ազատվել է խնամակալի պարտականությունների կատարումից) կամ վերացվել է հաշվետիրոջ որդեգրումը (եթե անձը ձեռք է բերել ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք որպես որդեգրող), կամ».

- 5-րդ կետից հանել «հաշվետիրոջ հետ Հայաստանի Հանրապետությունում նույն բնակության վայրում բնակվող (հաշվառված)» բառերը:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: